

# Բժշկական ֆինանսական օգնության քաղաքականության ամփոփագիր

Kaiser Permanente-ի Բժշկական ֆինանսական օգնության (Medical Financial Assistance, MFA) ծրագիրը ֆինանսական օգնություն է տրամադրում որակավորվող հիվանդներին, որոնց օգնություն է հարկավոր շտապ օգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքի համար, որը նրանք ստանում են Kaiser Permanente հիմնարկությունում կամ Kaiser Permanente մատակարարի կողմից: Հիվանդները կարող են դիմել MFA ծրագրի համար մի քանի եղանակով, ներառյալ՝ անձամբ, հեռախոսով կամ լրացնելով ու ուղարկելով թղթե դիմում: Հիվանդները պետք է համապատասխանեն ներքևում նշված իրավասության պահանջներին, որպեսզի որակավորվեն:

## Ո՞վ է իրավասու Ֆինանսական օգնության համար և որո՞նք են պահանջները:

Ծրագիրն օգնում է ցածր եկամուտ ունեցող, ապահովագրություն չունեցող կամ քիչ ծառայություններ ստացող հիվանդներին, ում օգնություն է հարկավոր ամբողջությամբ կամ մասամբ իրենց բժշկական խնամքի համար վճարելու հարցում: Ընդհանրապես, հիվանդներն իրավասու են Ֆինանսական օգնության համար, երբ նրանց Համախառն ընտանեկան եկամուտը կազմում է կամ ցածր է Դաշնային աղքատության ուղեհիշների (Federal Poverty Guidelines, FPG) 350%-ից, կամ եթե նրանք ունեն անսովոր բարձր բժշկական ծախսեր: Հիվանդները պետք է խորհրդակցեն Հիվանդի ֆինանսական խորհրդատուի հետ՝ իրենց իրավասությունը որոշելու և դիմելու օգնության համար:

*Այն հիվանդներից, որոնք իրավասու են բժշկական ֆինանսական օգնության համար, չի գանձվելու ավելի քան սովորաբար գանձվող գումարները (Amounts Generally Gilled, AGB) շտապ օգնության կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ այլ խնամքի համար: Տես՝ [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal) կայքը AGB-ի մասին տվյալների համար:*

## Արդո՞յք Kaiser Permanente-ն զննում է հիվանդներին հանրային ու մասնավոր ծրագրի իրավասության համար:

Kaiser Permanente-ն հիվանդներին օգնություն է տրամադրում՝ գտնելու հնարավոր հանրային ու մասնավոր առողջապահական ապահովագրման ծրագրեր, որոնք կարող են աջակցել առողջապահական խնամք ստանալու կարիքներին: Հիվանդը, ով իրավասու է համարվում հանրային ու մասնավոր առողջապահական ապահովագրման ծրագրի համար, պետք է դիմի այդ ծրագրերի համար:

## Ի՞նչ է ապահովագրում այս ծրագիրը:

Բժշկական ֆինանսական օգնության ծրագիրն ապահովագրում է բժշկական տեսակետից անհրաժեշտ խնամքը, որը տրամադրվել է Kaiser Permanente բժշկական գրասենյակում, հիվանդանոցում կամ դեղատանը, կամ տրամադրվել է Kaiser Permanente մատակարարի կողմից: Չապահովագրվող ծառայությունների տեսակներից են նրանք, որոնք Kaiser Permanente մատակարարը չի համարում արտակարգ իրավիճակ կամ բժշկական տեսակետից անհրաժեշտ, անպտղության բուժումներ և փոխանակ մայրության ծառայություններ, ինչպես նաև առողջապահական խնամքի ապահովագրություն: Խնդրում ենք կարդալ ամբողջական ցանկը MFA քաղաքականության փաստաթղթում:

## Կա արդյո՞ք լեզվական օգնություն:

Ձեզ համար մատչելի են անվճար բանավոր թարգմանիչներ: Բժշկական ֆինանսական օգնության դիմումը, քաղաքականությունն ու այս քաղաքականության ամփոփագիրը կարող են մատչելի լինել Ձեր լեզվով: Լրացուցիչ տեղեկությունների համար գանձահարեք 800-464-4000 հեռախոսահամարով կամ այցելեք մեր կայքը՝ [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal):

## ¿Se ofrece asistencia con el idioma?

Hay intérpretes disponibles sin costo para usted. Es posible que la solicitud para recibir asistencia financiera para los gastos médicos, la póliza y este resumen de la póliza estén disponibles en su idioma. Para obtener más información, llame al 800-464-4000 o consulte nuestro sitio web en [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal).

## 是否提供語言協助?

可免費為您提供口譯服務。醫療財務援助申請、政策和本政策摘要均可用您的語言提供。詳情請撥打 800-464-4000 或瀏覽網站 [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal)。

## Արդյո՞ք Kaiser Permanente-ն ունի Ֆինանսական օգնության քաղաքականություն:

Դուք կարող եք խնդրել Kaiser Permanente-ի Բժշկական ֆինանսական օգնության քաղաքականության անվճար պատճենը՝ գանձահարելով 800-390-3507 հեռախոսահամարով, նամակ գրելով P.O. Box 30006, Walnut Creek, CA 94598, կամ այցելելով մեր կայքը՝ [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal):

## Օգնության կարիք ունե՞ք:

Բժշկական ֆինանսական օգնության դիմելու գործընթացի մասին օգնության կամ հարցերի դեպքում խնդրում ենք գանձահարել 800-390-3507 հեռախոսահամարով կամ բրուցել Հիվանդի ֆինանսական խորհրդատուների բաժնից Հիվանդի ֆինանսական խորհրդատուի հետ՝ Kaiser Permanente ցանցակազմ հիվանդանոցում:

## Ինչպե՞ս պետք է դիմել:

Դուք կարող եք դիմել բժշկական ֆինանսական օգնության համար մի քանի եղանակով՝ խնդրելով ծրագրի մասին տեղեկություններ առցանց, անձամբ կամ հեռախոսով, կամ խնդրելով թղթե դիմում հետևյալ աղբյուրներից որևէ մեկից.

- Առցանց՝ [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal)
- Հիվանդի ֆինանսական խորհրդատուների բաժնից Հիվանդի ֆինանսական խորհրդատուից Kaiser Permanente ցանցակազմ հիվանդանոցում
- Զանգահարեք 800-390-3507
- Փոստով (անվճար)՝ P.O. Box 30006, Walnut Creek, CA 94598
- Ներբեռնելով դիմումը Kaiser Permanente Community կայքից՝ [kp.org/mfa/ncal](http://kp.org/mfa/ncal):

Խնդրում ենք ուղարկել լրացված դիմումները (ներառյալ՝ բոլոր պահանջվող փաստաթղթերն ու տեղեկությունները, որոնք նշված են դիմումի ցուցումներում) մոտակա Kaiser Permanente հիվանդանոցի ընդունարան կամ շտապ օգնության բաժին, կամ փոստով ուղարկել դիմումը հետևյալ հասցեով՝ MFA Program, P.O. Box 30006, Walnut Creek, CA 94598:

Kaiser Permanente-ն կոփտարկի ներկայացված դիմումները, երբ դրանք ամբողջությամբ լրացված են, և կորոշի՝ արդյոք դուք իրավասու եք՝ ըստ Kaiser Permanente Բժշկական ֆինանսական օգնության քաղաքականության (Medical Financial Assistance Policy): Կիսատ դիմումները կարող են հետաձգել մշակումը կամ դառնալ Ձեր MFA դիմումի մերժման պատճառ, սակայն Kaiser Permanente-ն կտեղեկացնի դիմորդներին ու նրանց հնարավորություն կտա ուղարկել պակասող փաստաթղթերը կամ տեղեկությունները մինչև պահանջվող վերջնաժամկետը: